

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի
Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ա Ր Ա Ն Ի
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ձ Մ Ի
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
АДМИНИСТРАЦИИ
АРМАВИРСКОГО
МАРЗПЕТАРАНА

0901 ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ. 2 42 62
Ֆաքս /0237/ 2 - 42 - 62

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 6 - 42 -62
Факс. 010/ 28-06-46

'04' 12 2015թ. N-----
Ձեր 20 թ. ----- N -----

“ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ” ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, “ՀԵՏՔ”
ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՊԱՐՈՆ Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Տեղեկացվում է Ձեզ, որ ՀՀ Արմավիրի մարզում 2009-2015 թվականների ընթացքում մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներից պարտուսահասակ տարիքի աշակերտներ ուսումը կիսատ չեն թողել: Որոշ դեպքերում երեխաների՝ ժամանակավորապես դպրոց չհաճախելու պատճառ է հանդիսացել ընտանիքի մշտական բնակության վայր չունենալը: Սոցիալական, առողջական, ընտանեկան և այլ խնդիրների, ինչպես նաև ծնողների իրավունքների վերազանցման դեպքերում ՀՀ Արմավիրի մարզպետարանի միջնորդությամբ երեխաները տեղավորվել են իրենց կարիքին համապատասխան ուսումնական (հատուկ դպրոցներ) կամ երեխայի խնամք և դաստիարակություն իրականացնող հաստատություններում:

Ըստ ուսումնական տարիների, նշված աշակերտների թիվը կազմել է՝

- 2011-2012 ուսումնական տարի- 12 աշակերտ,
- 2012-2013 ուսումնական տարի- 8 աշակերտ,
- 2013-2014 ուսումնական տարի- 7 աշակերտ,
- 2014-2015 ուսումնական տարի- 1 աշակերտ (ամուսնացել է, ազգությամբ եզդի):

Տեղեկացվում է նաև, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան բաժինների, ոստիկանության մարզային վարչության և համայքների համապատասխան կառույցների համագործակցությամբ աշխատանքներ են տարվում երեխաներին ուսումնական գործընթացում ընդգրկելու նպատակով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Գ. Սայադյան
Հեռախոս՝ 0237/22035